իցէ 'ի կողմանէ Յունաց և Լատինաց՝ բարձցէ և ուղղեսցէ զայնս ածելով յառաջին վիճակն, սակայն չեգիտ վնասակար ինչ։ Եւ ընթեռնուլ զգիրն Յունաց՝ զոր բերեալն էր 'ի դատարանի առաջի խուռն բազմութեան, ասէ, Տէրութիւնն յատկապէս ետ գրել զայսոսիկ տողս 'ի պաշտպանութիւն Հայոց, զի մի՛ պատճառանօք հակառակեսցին նոցա. ընդ այս բան անչափս ուրախացաւ Փոխանորդն Հայոց՝ որ նստէր 'ի ժողովի անդ։ Յայս գործ բազմօք աշխատեղեն 'ի կայսերանիստ քաղաքի անդ՝ Պետրոս և Ղազարոս Իշխանաւորք ազգին, յորդորանօք Գրիգոր վարդապետի Փոխանորդին Երուսաղէմի. զի զառաջին հրովարտակն Յունաց ետուն պատառել Հայք՝ և զերկրորդս այս, եբեր ատիկանն՝ յորոյ վերայ զիջան Յոյնք սակաւ ինչ 'ի կամս Հայոց, և սկսան ընկերութեամբ վարել 'ի գերեզմանն Ս. Աստուածածնի, զի 'ի չորեքշաբաթի Հայք 'ի վերայ գերեզմանին, Յոյնք 'ի վերայ գերեզմանաց Յովակիմայ և Աննայի, 'ի Կիւրակէի Հայք 'ի սեփհական սեղանն արտաքոյ գերեզմանին, Յոյնք 'ի ներքին կողմն յարեւելս 'ի տեղիս իւրեանց պատարագէին։ Եւ յետ կարգաւորելոյ զայս ամենայն՝ դարձաւ ատիկանն 'ի Կոստանդինուպոլիս, զորմէ Հայք գովութեամբ գրեն, (1758. 'ի 25 Հոկտեմբեր ամսոյ)։

ԳԼՈՒԽ Ժ.

Բռնութիւնք այլազգեաց։ Տառապանք վանօրէից յերեսաց Կուսակալացն Դամասկոսի։ Ապատամբութիւն Բեթղեհեմ գիւղի։ Վերջին կռակ Թէոդորոսի և մահ նորին։

ԹԷՈԴՈՐՈՍ Պատրիարք հաղիւ ուրեմն զերծեալ 'ի խռովութեանց Ս. Տեղեաց, յորս յետ բազմադիմի աշխատութեանց, ծախեցան նաեւ քսակք դրամոց, ապա ձեռն արկ նորոգել զմանս 'ի վանօրէից. իսկ այլազգիք Երուսաղէմի բռնացան 'ի վերայ նորա, և պատճառանօք պահանջէին 'ի նմանէ զգումարս դրամոց. երբեմն իբրու թէ ապառնոց հրամանի չմնեալ են, և երբեմն թէ՝ պարտ է վե-